

XV—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ ԼՎՈՎՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ
ՀԱՅ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

ՅԱ. Գ. ԻՍԱԿՅԱՆ (Լվով)

XV դ. մինչև XVIII դ. առաջին կեսը ուկրաինական համարյա բոլոր հոգերը գտնվում էին Լեհ-Լիտվական շլյախտայակա՝ պետության տիրապետության տակ։ Միայն Ուկրաինայի հարավը օկուպացված էր Ղրիմի խանության, իսկ Անդրկարպատները՝ հունգարական ֆեոդալների կողմից։ Բուկովինացի մանուկ էր Մոլդավական իշխանության մեջ, որը ղեկավարվում էր Կախովյան մեջ էր գտնվում թուրքերից։ Այնպես ժամանակաշրջանում, մասամբ նաև ավելի ուշ, արևմտաուկրաինական հողերում (սերառյալ Աջափնյա Ուկրաինայի հարավ-արևմտյան մասում) զարգանում էին հայկական հին գաղթավայրերը և առաջանում նորերը։ Հայ նորարարականների և շրջակա ուկրաինական բնակիչների միջև եղած բարեկամական հարաբերությունները, որոնց մասին վկայում են բազմաթիվ աղբյուրներ, գաղթավայրերի զարգացմանն աջակցող կարևոր գործոն էին հանդիսանում։

Համեմատաբար մեծ թվով աղբյուրներ են պահպանվել Լվովի հայկական գաղութի պատմության վերաբերյալ։ Ը ղեպ, ուկրաինական և հայ բնակչության միջև աշատեղ ստեղծված բարեկամական հարաբերությունները բնորոշ էին Ուկրաինայի նաև այլ քաղաքների համար, այնպես որ Լվովի օրինակը, այս առումով, կարելի է ախպակա՞ն համարել։

XIV—XVI դդ. Լվովը Ուկրաինայի տնտեսական և կուլտուրական խոշորագույն կենտրոններից մեկն էր։ Քաղաքն աճեց Չամկովյան լեռան ստորոտում, Փալիցիա-Վոլինյան իշխանության շրջանում։ Սակայն լեհական ֆեոդալների կողմից իշխանությունը դրավելուց հետո առաջացավ նոր քաղաք, որը գտնվում էր նախկինից ղեպի հարավ։ Լեհական թագավորների արտոնագրերի և Մագդեբուրգյան իրավունքի համաձայն միայն քաղաքի նոր մասի բնակիչները ունեին «մեշչանների» (քաղաքացիների) բոլոր իրավունքները, իսկ Լվովի հնագույն մասը համարվում էր արվարձան, որը հետագայում կոչվեց Գրակովյան¹։ Քաղաքի ուկրաինական բնակիչների մեծամասնությունը, ինչպես նաև հայ նորարարականներից շատերը «մերձքաղաքացիների» վիճակի մեջ բնկան։ Լվովի կենտրոնական մասում ուկրաինացիներն ու հայերը կարող էին ապրել իրենց հատկացված թաղամասերի սահմաններում միայն։

Քաղաքի մեծ մասը զբաղվել էին գաղութարար-կաթոլիկները, որոնք արգելում էին ուկրաինացիներին ու հայերին բնակություն հաստատել իրենց

¹ Շուտով, քաղաքի կենտրոնից ղեպի հարավ, ստեղծվեց ևս մի արվարձան, որ կոչվեց Եալիցյան։

թաղամասերում: Այնինչ հայերը հնուց բնակվում էին ուկրաինական թաղամասում, իսկ ուկրաինացիները՝ հայկականում: Այսպես, Հայկական փողոցի բնակիչների հնագույն ցուցակներում (1414 և 1421 թթ.)² հայկական անունների կողքին նշված են ուկրաինացի քաղաքացիներ Գավրիլո, Գիրիչ, Իվան³ և «Batco⁴ Ruthenorum» (այսինքն ուղղափառ քահանա) անունները: Լվովի Ուսպենսկու (Ստավրուպիլյան) միաբանությունը 1595 թ. իր պաշտոնական փաստաթղթերից մեկում ընդգծում է, որ հայկական բոլոր տներում բնակվում են ուկրաինացիներ՝ վաճառականներ, արհեստավորներ, ծառաներ⁵: Մասնավորապես միաբանության անդամ Իվան Կրավցեր ապրում էր հայ տերտերի տանը, հայկական գերեզմանատան մոտ⁶: Իրենց հերթին, հայերը բնակություն էին հաստատում ուկրաինացի բնակչության մեջ ոչ միայն Լվովում, այլև մյուս քաղաքներում: Այսպես, ուկրաինական հինավուրց Բելզե քաղաքում, որտեղ ուկրաինացիները կազմում էին բնակչության գերակշռող մասը⁷, 1494 թ. բնակություն հաստատեց Լվովի արվարձանից եկած հայ Գրիցկոն, որը Լվովի իր սեփական տունը փոխել էր իր եղբոր՝ Բելզեի քաղաքացի Յարոշի ունեցվածքի հետ⁸: Կամենեցում ևս, որտեղ ուկրաինական և հայ բնակչության համար կային առանձին մագիստրատներ, հայերը բնակություն էին հաստատում ուկրաինական թաղամասերում:

XV և մինչև XVII դ. առաջին կեսը Արևմտյան ուկրաինայում ապրող հայերի մեծ մասը ուներ ուկրաինական անուններ և ազգանուններ (Ստեցկո, Գրիցկո Իվաչկովիչ, Յուրի Վասիլովիչ և այլն): Նրանցից շատերը այգալիսի ազգանունները պահպանեցին և հետագայում: Ըվ եթե այնուհետև որոշ հայ նորարենականների (ղերազանցապես պատրիկների) կողմից լեհական անուններ և ազգանուններ բնդունելը կապված էր հարկադրական լեհացման քաղաքականության հետ, ապա հայերի կողմից ուկրաինական ազգանունների օգտագործումը ամենևին զրգված չէր պետական իշխանությունների որևէ ճնշումով: Ուկրաինական տիպի անունները հավաստում են ուկրաինական բնակիչների հետ հայ նորարենականների ունեցած կուլտուրական կապերի առկայության մասին, որոնք սկիզբ են առել դեռևս Կիևյան Խուսիայի ժամանակներից: Միանգամայն հավանական է նաև հայկական ազգեցությունը ուկրաինական օտոմատիկայի վրա: Համենայն դեպս, մի փաստաթղթում հիշատակված է «ուկ-

² «Pomniki dziejowe Lwowa», հատ. 3, Լվով, 1905, էջ 27, 69:

³ Ի. Գ. Կրիպյակևիչը գտնում է, որ նրան չի կարելի նույնացնել այն ժամանակ հայտնի հայ Իվաչկոյի հետ: Տե՛ս «Записки Наукового товариства ім. Шевченка» (այսուհետև՝ ЗНТШ), հատ. 72, էջ 199:

⁴ Ուկրաինական «բատկո» («հայր») բառով այն ժամանակ կոչում էին ուղղափառ հոգևորականության ներկայացուցիչներին:

⁵ «Monumenta confraternitatis Stauropeigianae, ed. w. Milkowicz», հատ. 1, Լվով, 1895—1898 (այսուհետև՝ «Monumenta»), էջ 366:

⁶ Նույն տեղում, էջ 408:

⁷ ЗНТШ, հատ. 154, էջ 15—31:

⁸ «Akta grodzkiei ziemskie», հատ. 15, № 2431:

⁹ Այդ մասին է վկայում Լվովի միաբանության արխիվում պահպանված մի քաղվածք Կամենեցի ուկրաինական մագիստրատի 1575 թ. ակտերից՝ կրակովցի Ստանիսլավ Գելիտորնի (Կելեյցորնի) կողմից Կամենեցի հայ Գուրու Կիրկորովիչի գեմ հարուցած գործի մասին («Monumenta», էջ 71—72):

ոսինացի Քորոս»¹⁰, իսկ ուկրաինացի քաղաքացիներին 1623 թ. Լվովի միաբանության անդամների թվում նշվում է Իվան Ավեդիկը¹¹:

Հայտնի է, որ վաղ և զարգացած ֆեոդալիզմի շրջանում Եկեղեցին իշխող դիրք է ունեցել հասարակական-քաղաքական և կուլտուրական կյանքում: Պետականությունից զրկված ուկրաինացիները համախմբվում էին ուղղափառ եկեղեցու, իսկ հայերը՝ հայ-լուսավորչական եկեղեցու հաստատությունների շուրջը, որոնք երկար ժամանակ հանդիսանում էին նրանց միակ քաղաքական և կուլտուրական կենտրոնները: Այն ժամանակվա ուկրաինացի համար լիովին կիրառելի է էնգելսի այն դիտողությունը, որ Եթև «...առանձին դասակարգերի շահերը, կարիքներն ու պահանջները կրոնական շղարշով էին քողարկված, դասակարգային չի փոխում գործի էությունը և հեշտությամբ բացատրվում է իր ժամանակի պայմաններով»¹²: Ուստի հետաքրքրական է նշել, որ ուղղափառ և հայ-լուսավորչական հոգևորականության ներկայացուցիչները, շնայած դավանաբանական տարբերություններին, գործնական կապեր էին հաստատում միմյանց միջև: Իհարկե պատահականություն չէ, որ հայերը և ուկրաինացիները XIV դ. և XV դ. սկզբին միաժամանակ զբաղվում են քուրե տաճարների կառուցումով¹³, այդ գործը հանձնարարելով միևնույն ճարտարապետ Դորին (Դորինդին)¹⁴: Ինորոշ է նաև, որ 1430 թ. մայր տաճարին կից Յուրա վանքը որոշ ժամանակ գտնվել է հայ կալեսիկովիչների բնտանիքի հովանավորության ներքո¹⁵:

Յուրայի վանքից (de Yurgyow monastyrjo) հայ Պյոտր Գամլեգովիչը հիշատակվում է 1445—1453 թթ. ակտերի մեջ¹⁶: Օնուֆրիի հնագույն ուղղափառ վանքը, որը հնուց ի վեր եղել է ուկրաինական քաղաքացիների հովանավորության տակ, գտնվում էր Հայկական կամրջի փողոցում, հայկական վանքի և Գրիգորի Գլուշկովիչի տան միջև¹⁷:

Ուկրաինական ուղղափառ եկեղեցու կյանքում հայերի մասնակցության գեպեր են եղել նաև XVI—XVII դդ.: Տեղեկություններ կան, որ XVI դ. վերջում Լվովի Լպիսկոպոս Գեդեոն Բալարանի ղեմ գլուխ եկած Լվովի և Ռոգատինայի ուկրաինական քաղաքացիների և Լպիսկոպոսին պաշտպանող քաղաքացիների միջև ծագած դժուրության ժամանակ, մի քանի հայեր վերջիններիս կողմն են անցել¹⁸: 1596 թ. հուլյն վանական Պաֆնուտին, որը համակրությամբ է վերաբերվել ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարին, Մոսկվա է մեկնել դամոստացի հայ Մուրառի հետ¹⁹:

¹⁰ «Архив югозападной России» (այսուհետև՝ АЮЗР), մաս առաջին, հատ. 11, էջ 413:

¹¹ Центральный государственный архив Украинской ССР во Львове (այսուհետև՝ ЦГА во Львове), ֆ. 9, т. 376, էջ 80:

¹² Ֆ. էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Սբևան, 1940, էջ 45:

¹³ Կառուցվեցին Յուրա տաճարը, որը XVIII դ. քանդված և փոխարինված է նորով, և Հայկական տաճարը, որը, շնայած XVI—XX դդ. կառարված բազմաթիվ վերաշինություններին, պահպանել է իր հնադարյան մասը:

¹⁴ D. Zubrzycki, Kronika miasta Lwowa, Լվով, 1844, էջ 39, Տ. Մանկովսկին գտնում էր, որ երկու եկեղեցիների շինարարն էլ եղել է իտալացի ճարտարապետ Դորին (T. Manowski, Sztuka orimian lwowskich, Կրակով, 1904):

¹⁵ ЗНТШ, հատ. 79, էջ 50—51:

¹⁶ «Akta grodzkiei ziemskie», հատ. 14, № 1511, 2966, էջ 438:

¹⁷ «Monumenta», I, էջ 387:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 287, 289:

Պետք է նշել, որ հունական բարձրաստիճան հոգևորականությունը, հենվելով նաև բյուզանդական «եկեղեցու հայրերի» երկասիրությունների վրա, հաճախ ձգտում էր սրել հայերի և ուղղափառների միջև եղած հարաբերությունները աստվածաբանական-դավանարանական տարաձայնությունների առթիվ: Այսպես, 1592 թ. Կիսրոսից Լվով եկած միտրոպոլիտ Լավրենտին աստվածաբանական հարցերի կապակցությամբ բանավիճելու էր դնացի ոչ միայն կաթոլիկների, այլև հայերի հետ²⁰: Սակայն բոլոր հակակաթոլիկական ուժերի միավորումը պահանջող կենսական շահերը ավելի ուժեղ էին, քան եկեղեցականների դոգմատիկ վեճերը: Բարեկամական հարաբերություններին նպաստում էր նաև ուղղափառ և հայկական եկեղեցիների արարողությունների նմանությունը: Ուկրաինացիների և հայերի միջև ամուսնությունները սովորական երևույթ էին: Հայտնի է և մեկ ամուսնալուծական դործ ուկրաինական շլյախտիչի և հայ Բիրկայի միջև²¹: Ի դեպ, երևի, սա միակ այդպիսի ապահարզանն էր Լվովի դատավորների պրակտիկայում, և նրանք չգիտեին ում իրավասությունը պետք է պատկանի տվյալ գործը: Ավելի ուշ, XVI դ. երկրորդ կեսում հոգևորականության մի մասը խառը ամուսնություններին դեմ դուրս եկավ: 1591 թ. Լվովի միաբանությունը հարցում արեց Կ. Պոլսի պատրիարքին այն մասին, թե ընդունելի են արդյոք այդպիսի ամուսնությունները: Ընդ որում միաբանությունը նշում էր, որ հայերը վախենալով արյունապղծական ամուսնություններից՝ հայ համայնքի ներսում, ցանկանում են իրենց ազգիկներին ամուսնացնել ուկրաինացիների հետ²²: Իրականում, միաբանությունն այդ ժամանակ, և հետագայում, բարեկամարար էր վերաբերվում հայերին: Լվովի միաբանության շինությունների կոմպլեքսի վրա վեր բարձրացող «Կորնյակահ վեժա»-ից հանդիսավոր պարագաներում և թաղումների ժամանակ հնչում էին հուշակավոր «Կիրիլի» և մյուս զանգերի զոզանքները: Վաթնիկական պատրիկներին և մոտիկում բնակություն հաստատած դոմինիկյան վանականներին շատ էր վաշտադնում այդ զոզանքը, որ հիշեցնում էր Լվովում իրենց համարատելի «սքեմավորներին» գոյության մասին: Բազմիցս նրանք ձգտել են զանազան պատրվակներով միաբանությանն արգելել զանգերը դարկել, բայց ուկրաինացիները միշտ պնդում էին իրենց իրավունքի վրա՝ հնչեցնել զանգերը այն ժամանակ, երբ իրենց անհրաժեշտ է, դրան տալով, բայց երևույթին, սիմվոլիկ նշանակություն: Եվ ահա, ինչպես երևում է եկեղեցական մատյաններից, Կորնյակտի վեժայից զանգեր են դարկել նաև հայկական արքեպիսկոպոսի և հայ քաղաքացիների թաղման ժամանակ²³: Օնուֆրիևյան «կրտսեր» միաբանությունը Կրակովյան արվարձանում նույնպես մասնակցություն է ունեցել հայ նորարանների թաղման արարողություններին²⁴: Այսպիսով, շնայած

²⁰ Նույն տեղում, էջ 333:

²¹ Н. А. Тинниченко, Брачные разводы в древней Польше и Юго-Западной Руси, «Юридический вестник», հատ. 6, 17., 1890, գիրք 4, էջ 52:

²² «Н о сем паки вопрошаем пастырства твоего: аще что сего будет или кая полза, еже зъло желают, даже совокупляемся с ними и брачимся со дщерями их, яко зде во градъ нашем множайши суть, и вси в соужичеств средства, и не имут кому отдавати дщерей своих, сами же собою кровомъшениа боются» (Чтения в историческом обществе Нестора летописца, գիրք 5, 4., 1891, էջ 184, «Monumenta», էջ 873):

²³ АЮЗР, հատ. 11, էջ 499, 513, 532, 534, 535:

²⁴ Նույն տեղում, էջ 153:

ուղղափառ և հայ-լուսավորչական եկեղեցիների պաշտոնական հայացքներին, հայերը և ուկրաինացիները հաճախ կենցաղային բնույթի զանազան արարողություններում տարբերություն չէին գնում իրար միջև:

Ա. Մ. Երացիանին (1537—1611) Փարիզում հրատարակած իր կարգի-նայ Զովաննի Կոմենգոների կենսագրության մեջ հիշատակում է ուկրաինացիների և հայերի միջև եղած կապի մասին: Ըստ նրա խոսքերի, բազմաթիվ հայեր բնգունել են ուկրաինական ուղղափառ բնակչության սովորույթները²⁵, Հայերը և ուկրաինացիները դարեր շարունակ ապրել ու աշխատել են կոդակոզի, և դա չէր կարող չարտահայտվել նրանց արտադրական գործունեության, բնատնեկան կենցաղի, հագուստի վրա: Մասնավորապես, հայ զեղարվեստական արհեստի գործերը մեծ ժողովրդայնություն էին վայելում ուկրաինական բնակչության շրջանում: 1621 թ. Լվովի միարանությունը հայերից գնել էր երկու գորգ Զիգմունտ III թագավորին կաշառք տալու համար, և հնդկական երկար գլխաշոր՝ արքայորդի Վլադիսլավին նվիրելու համար²⁶: Շլյախտայական իշխանություններին կաշառելու համար սելմի նիստերի ժամանակ նույնպես գնվում էին գորգեր, սաֆյան²⁷ և այլ ապրանքներ, որոնց պատրաստման գործով զբաղի չափով զբաղվում էին հայ արհեստավորները: Նույնիսկ XVII դ. կեսերի ուկրաինական կազակային զորքի զրոշներից մեկի վրա տեսնում ենք մանրանկարներ, վերցված արևելյան տիպի վրանների զարդարանքներից, որոնց պատրաստման գործով Ուկրաինայում, ամենից ավելի, զբաղվում էին հայ հմուտ արհեստագործները²⁸:

Մերձավոր Արևելքի, Բալկանյան թերակղզու և այլ երկրների հետ ամուսնալուծական կապեր հաստատելով, հայերը աջակցում էին ուկրաինական պետությունը համաշխարհային առևտրի մեջ ներգրավելուն: Ուկրաինական բազմաթիվ լինում էին հայ առևտրականներ Կաֆայից, Կ. Պոլսից, Ռոբատից, Բալկանյան երկրների բազմաթիվ և բուն Հայաստանից: Մյուս կողմից Լվովի, Կամենեցի, Կիևի, Մերձկարպատյան բազմաթիվ գաղթավայրերի ուկրաինական հայերը մշտական կապեր էին պահպանում միմյանց միջև²⁹: Հայ վաճառականների բարավանները անցնում էին ամբողջ Ուկրաինայով: Առևտրական ճանապարհներից մեկը, օրինակ, XVI դ. Կաֆայից գնում էր Կամենեցի—Սատանովի—Կրեմենեցի—Լուցկի—Սոկալի—Բելզի—Յարոսլավի վրայով³⁰: Հայ վաճառականների միջազգային լայն կապերը օժանդակել են նաև ուկրաինական առևտրականներին թափառելու արտասահմանյան նոր շուկաներ: Այսպես, գեոևա XV դ. 40-ական թվականներին Լվովցի հայ Սենկոն և ուկրաինացի վաճառական Անտոնը համատեղ առևտրական գործարքներ էին վարում Մեծ Նովգորոդի հետ³¹: XV—XVI դդ. Լվովի ուկրաինացիները մշտա-

²⁵ Я. Р. Дашкевич, Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX вв., Ереван, 1962, էջ 25:

²⁶ АЮЗР, հատ. 11, էջ 55—56:

²⁷ Նույն տեղում, էջ 169:

²⁸ Я. Д. Усачевич, Бойові прапори українського козацького війська в середині XVII в., «Український історичний журнал», 1963, № 1.

²⁹ ПГНА во Львові, ф. 9, т. 341, էջ 451—454, т. 345, էջ 531; т. 339, էջ 1171, т. 345, էջ 532; т. 342, էջ 921 և հա.:

³⁰ Նույն տեղում, հատ. 345, էջ 532:

³¹ «Pomniki dziejowe Lwowa», հատ. 4, Լվով, 1921, № 1179:

կան կապ ունեին Սուչավայի և Մոլդավական իշխանության այլ քաղաքները հայերի հետ³²։ XVII դ. 20-ական թվականներին Լվովի Ուսպենսկու միարանությունը անդամ Անդրեյ Ստրիլցեկին նույնպես սխտեմատիկորեն առևտուր էր անում Սուչավայի հայ վաճառականների հետ։ Հայերի հետ միասին արտասահման էր մեկնում նաև Ռոման Ստրիլցեկին³³։ Միարանության անդամները այդ ժամանակ հաճախ գնում էին Ուկրաինայում հայ գաղութարենականների առևտրական կենտրոններից մեկը հանդիսացող Յավուլեց քաղաքը, առանձին վաճառականների կամ միարանության անունից առևտրական գործարքներ կատարելու համար³⁴։

XVI—XVIII դդ. հայ և ուկրաինական բնակչության միջև ամրապնդվեցին տնտեսական կապերի նաև այլ ձևերը։ Այսպես, XVI դ. 70—80-ական թթ. Լվովի արվարձանի ուկրաինացի բնակիչների պարտատերի ղերում հաճախ հանդես է եկել հայ Ավեդիկը՝ տերտեր վասկոյի աղան³⁵։

Ուկրաինական կուլտուր-լուսավորական նշանավոր գործիչ, 1582—1587 թթ. Լվովի միարանության ղեկավարներից մեկը՝ Իվան Կրասովսկին օգտվում էր հայեր Զախարի և Նիկոլայ Բերնատովիչ Լոբաչյուների վարկից³⁶։ Մյուս կողմից, ինչպես երևում է միարանության անդամ Ստեփան Լյաշկովսկու 1650 թ. կապից, ուկրաինացի այս վաճառականը Լվովի հայերին էր տրամադրում դրամական զգալի վարկ³⁷։ Ստավրոպոլիցյան Լոբաչյուցիները ևս հաճախ փոխառություն էր անում հայ արհեստավորներին և վաճառականներին։ XVII դ. կեսերին Լվովի հայ վաճառական Լուկաշ Սեֆերովիչը, օրինակ, միարանությունից փոխառություն ստացավ 1200 ոսկի, զգալի փոխառություններ ստացան հայեր Պանովկան և Պերեմովիչը³⁸։ Կարևոր է նշել, որ միարանությունից փոխառություններ էին ստանում ոչ միայն Լվովի, այլև մյուս քաղաքների հայերը։ Այսպես, միարանության 1657 թ. ժողովի արձանագրության մեջ կարդում ենք, որ միարանները 4515 ոսկու չափով փոխառություն տվեցին Բրոդա քաղաքի քաղաքացի ղերձակի որդի Միկոլայ Յակուբովիչին³⁹։ Շատ հաճախ միարանությունը իր շենքերը վարձակալության էր տալիս հայ վաճառականներին խանութների («краны») և պահեստների համար։ 1655—1658 թթ. օրինակ, միարանությունը վարձով է տվել մի խանութ Աննա Զախարիչաշովա Մանուկովիչովային, իսկ 1688 թ. նկուղ՝ Սիմոն Կրիշտոֆովիչին։

Հայկական փողոցի բնակիչները նյութական օգնություն էին ցույց տալիս Լվովի միարանությանը, որի անդամները հաճախ հայկական փողոցում ապրող

³² N. Iorga, Studii si documente cu privire la istoria Românilor, հատ. 23, *Լուբարևա*, 1913, էջ 310, 327։

³³ Ф. Срібний, Студії з організації Львівської Ставропигіалі, ЗНТШ, հատ. 115, էջ 46։

³⁴ նույն տեղում, էջ 54։

³⁵ ЦГИА во Львове, ф. 52, оп. 3, д. 381, т. 384, էջ 683։

³⁶ Ф. Срібний, նշվ. աշխ., ЗНТШ, հատ. 114, էջ 28—29։ Հետաքրքիր է նշել, որ Իվան Կրասովսկու տունը հայ Դոնովակի տան կողքին էր, իսկ Իվանի հայր Դյոմկա (Դիոմիդ) Կրասովսկու տունը գտնվում էր «հայկական բաղնիքի կողքին» (նույն տեղում, հատ. 111, էջ 6, 13)։

³⁷ Ф. Срібний, նշվ. աշխ., ЗНТШ, հատ. 115, էջ 61։

³⁸ АЮЗР, հատ. 11, էջ 169, 168, А. Крыловский, Львовское Ставропигиальное братство, Կ., 1904, էջ 131։

³⁹ նույն տեղում, էջ 184, 132, 137, 692։

ուկրաինացիներն էին⁴⁰։ Շատ անգամ հայկական տներում ապրող ուկրաինացի տնօրենները, աշկերտները և սպասավորները դրամական գումարներ էին կտակում միարանությունը, և հայերը, նրանց մահից հետո, կատարելով կտակարարների կամքը, այդ գումարները հանձնում էին միարանության ներկայացուցիչներին⁴¹։ 1636 թ. հայ Ավեղիկովան երկու ոսկի է տվել միարանության շպիտային (հիվանդանոցին, ապաստարանին)⁴², իսկ 1637 թ. հայուհի Ջուզաննա Ստեփկեվիչովան ուկրաինական շպիտային կտակել է 10 ոսկի⁴³։ 1628 թ. Գեորգի Խոտկեվիչի ժառանգ հայերը Օնոֆրիի վանքին նվիրել են բանջարանոց կամ փոքր կալվածք (hortum seu praedium)⁴⁴։ Հնարավոր է, որ նվերի անվան տակ տվյալ դեպքում թարնված է վաճառքը, սակայն ինքնին հետաքրքիր է միարանության հովանավորության ներքո գտնվող վանքին հոգակտոր վաճառելու փաստը (միարանությունն այնտեղ տեղավորել էր շպիտայը, դրադարանի մի մասը և տպարանը)։ Հարկավոր է նշել, որ միարանության անդամներն, ընդհանրապես, կաթոլիկ պատրիկներին պաշտպանվելու նպատակով գերադասում էին կաթոլիկներին առջարժ գույք չվաճառել։

Կաթոլիկական պատրիկությունը գրավելով իշխանությունը քաղաքում, ձգտում էր էլ ավելի սահմանափակել ուկրաինացիների և հայերի քաղաքացիական իրավունքները, ամեն կերպ խոչընդոտ էր հարուցում նրանց առևտրաարդյունաբերական գործունեությունը։ Մագիստրատի իշխանությունները և ցեխային վերնախավի ներկայացուցիչները արգելում էին ուկրաինացիների և հայերի մուտքը որոշ ցեխեր, բնագրավում նրանց արդյունաբերական արտադրանքը, արտադրության գործիքները և այլն⁴⁵։ Զարմանալի չէ, որ ցեխային վերնախավի ճնշման դեմ պայքարող ոչ ցեխային արհեստավորների թվում դերազանցում էին ուկրաինական արհեստավորները, որոնց մեջ զգալի տոկոս էին կազմում հայերը⁴⁶։ Ի դեպ, արտացեխային բոլոր արհեստավորները, առանց ազգային խտրության, համերաշխորեն հանդես եկան արհեստի ֆեոդալական սահմանափակումների դեմ⁴⁷։

Կաթոլիկ ֆեոդալները և պատրիկությունը, կաթոլիկական կրոնի դրոշի ներքո, սահմանափակում էին հայ նորարենակների իրավունքները, ձգտելով նրանց զրկել իրենց ազգային ինքնատիպությունից։ Այսպիսով, հայ դադուքարենակները զրկում էին նույնպիսի ազգային-կրոնական ճնշում Ռեչ Պոսպոլիտայի տիրող դասակարգերի կողմից, ինչպես և ուկրաինացի բնիկ ժողովուր-

⁴⁰ Львовская библиотека АН УССР (այսուհետև՝ ЛБАН), рукопись 2170, л. 81; АЮЗР, հատ. 11, էջ 310, 372։

⁴¹ АЮЗР, հատ. 11, էջ 339, 363, 370 և այլ. («Пан Шимон Костевич орменин старцею, в его дому представашеся, отказавих дал зол. 15» и т. п.) в 1623 г. «Криштоф Шуник, орменин под час погребу сауги его московки дал зол. 7 гр. 5½».

⁴² АЮЗР, հատ. 11, էջ 680։

⁴³ Н. К. Кривонос, Армяне в культурной жизни Львова. «Исторические связи и дружба украинского и армянского народов», *Երևան*, 1961, էջ 135։

⁴⁴ ЛБАН, Собрание василанских монастырей, рукопись 132 (104), л. 6.

⁴⁵ Օրինակ, 1584 թ. հայ կոշկակար Զախարիից բռնադրավել են սաֆյանե «папучі» և «капці», չնայած հայ արհեստավորներին հնուց թույլատրվում էր կարել սաֆյանե կոշիկներ (ЦГИА во Львове, ф. 9, т. 343, էջ 663, 733—735)։

⁴⁶ ЦГИА во Львове, ф. 9, т. 339, էջ 1944—1978 (списки «партачей» за 1580 год).

⁴⁷ Л. Крип'якевич, Борьба пецехових ремісників проти цехів у Львові. В кн. «3 історії західноукраїнських земель», հատ. I, 4., 1957.

դր: Ուկրաինական ժողովրդի և հայ նորաբնակների ապագա յնացման քաղաքականության զաղափարական «հիմնավորումն» էին հանդիսանում կաթոլիկական աստվածաբանների տրակտատները հայերի և ուկրաինացիների «հերետիկոսությունների ու մոլորությունների» մասին: Այս տեսակետից հետաքրքրական է 1375 թ. մադագաթից օրենսդիրը՝ «De questionibus Armenorum seu Rutenorum»⁴⁸:

Չափազանց բնորոշ է, որ կաթոլիկական ֆեոդալները, հոգևորականությունն ու քաղաքային պատրիկությունը հաճախ միաժամանակ ձեռնարկում էին միատեսակ թշնամական դործողություններ հայ և ուկրաինական բնակչության նկատմամբ: 1596 թ. Լվովի կաթոլիկ արքեպիսկոպոս Գմիտրի Սուլիկովսկին հարձակման անցավ ուկրաինացի և հայ նկարիչների դեմ, չնայած նրան, որ այդ նկարիչների վարպետությունը հասել էր այնպիսի աստիճանի, որ իրենք, կաթոլիկական եկեղեցականները, գերազանցապես նրանց էին պատվիրում սրբապատկերներ՝ կոստյուրների համար: Սուլիկովսկին վճույք ստեղծել կաթոլիկ-նկարիչներից եխ, արգելելով այնտեղ բոլոր հերետիկոսների մուտքը, որոնց սկսեցին հետապնդել որպես արտացեխային արհեստավորների⁴⁹: Այսպիսի փորձերին, բնականաբար, ուկրաինական և հայ նկարիչները պատասխանում էին միահամուռ դիմադրությամբ, և շուտով Սուլիկովսկին ստիպված եղավ հրաժարվելու իր մտադրությունից: Նույն արքեպիսկոպոս Սուլիկովսկին, նոր օրացույց մտցնելու կապակցությամբ, հայերի և ուկրաինացիների դեմ կազմակերպած սեպրեսիաների նախաձեռնողն էր: Գեոռև 1583 թ. սեպտեմբերի 20-ին Լեհաստանի թագավորը կտրգադրեց, որպեսզի ուղղափառները (ուկրաինացիներ, բելոսուսներ) և հայերը անպայման օգտագործեն նոր (գրիգորյան) օրացույցը, ինչպես կաթոլիկները⁵⁰: Ոչ կաթոլիկ բնակչությունը սա դիտեց որպես իր ներքին գործերին միջամտելու փորձ և հրաժարվեց հնազանդվել: Արքեպիսկոպոս Սուլիկովսկու համար դա նոր առիթ եղավ Լվովի ուկրաինացի և հայ բնակչության նկատմամբ նոր, չրոգարկված ձեռնում դործադրելու, եկեղեցիները փակելու համար: Իսկ կերպով նոր օրացույցը մտցնելու դեմ պայքարում ուկրաինացիներն ու հայերը սուրի ելան միասին, որի մասին վկայում է Կ. Պոլսի պատրիարք Երեմիայի նամակը ուղղված հայերին, ուղղափառներին և Կոնստանդին Ստորոժսկուն, որտեղ նա համոզում էր չենթարկվել նոր կաղադրություններին⁵¹: Ուկրաինական ժողովրդի համար գերադույն աստվածաբանական հեղինակություն հանդիսացող պատրիարքը իր 1583 թ. նոյեմբերի 20-ի նամակում գրում էր, որ հայերը նույնպես դիմել են իրեն խորհուրդ հարցնելով նոր օրացույցի կապակցությամբ: «Муже арменстін вопрошають нас о сем глаголюще яко понуждают нас прияти календарь сія и сія повелѣвающе, яко подлежащих сему»: Ի պատասխան դրան Երեմիան տեղեկություն է տալիս Մեծ և Փոքր Հայրի մասին (հիշատակում է Տրդատին, Արտավազդին և այլ տիրակալների), մատնանշելով, որ նրանք երբեք չեն եղել

⁴⁸ Յազեկոնյան գրադարան Կրակովում, ձև. N 1599: Տրակտատի հեղինակը ստույգ հայտնի չէ: Նկարագրել է, որ դա տն Աnglicus-ը կամ Laurentius de Ratibor-ն է:

⁴⁹ М. Голубець, Українське малярство XVI—XVII ст. під покровом Ставропіті. В кн.: «Збірник Львівської Ставропіті», հատ. 1, Լվով, 1921, էջ 231:

⁵⁰ ЦГИА во Львове, ф. 9, т. 342, էջ 1715—1716:

⁵¹ И. Малишевский, Мелетин Пигас, հատ. 2, Կ., 1872, հավելում 3, էջ 84—101:

Հռոմի պապի իշխանության ներքո⁵²։ Նկատել էր, որ միաբանության արխիվում պահպանված նրեմիայի նամակը, ըստ երևույթին, եղել է ուկրաինական կուլտուրական գործիչներին հայ ժողովրդի պատմության հետ ծանոթացնող արշուրներից մեկը⁵³։

1596 թ. Բրեստի ունիայից հետո ուկրաինական բնակչության, իսկ ավելի ուշ նաև հայ գաղութարենակների, նկատմամբ եղած ճնշումն ուժեղացավ։ Միավորման բռնի արմատավորման գաղափարական նախապատրաստմամբ գրադվեցին ճիզվիտները։ 1631 թ. Լվովի կաթոլիկ եպիսկոպոսներին սպասարկող Յան Եկլիդի տպարանում լույս ընծայվեց ճիզվիտ Թոմաշ Էլզանովսկու «Լեհական հերետիկոսների անհավատությունը» գիրքը, որն ուղղված էր ուկրաինացիների ու հայերի դեմ⁵⁴։ Համատեղ գրոհը ուկրաինական և հայ «հերետիկոսների» վրա պատահական չէր։ Բնորոշ է, որ ունիայի հայտնի պրոպագանդիստ Կլեմենտ Գալյանոն նշել է, որ և՛ հայերը, և՛ ուկրաինացիները թշնամարար ընդունեցին Հռոմի հետ բռնի միավորման գաղափարը⁵⁵։

XVII դ. սկզբում Լվովի միաբանությունը փորձ արեց քաղաքական իրավունքների համար համատեղ պայքար վարելու նպատակով համագործակցություն հաստատել հայկական համայնքի հետ։ Սակայն համայնքի ղեկավարությունը դրաված հայ հարուստ պատրիկները, որ թաղավորից հենց նոր էին ստացել մի շարք արտոնություններ, ըստ երևույթին, շահագրգռված չէին կաթոլիկական պատրիկության դեմ հետագա համատեղ պայքարի մեջ։ Նրանք միաբանությանը օգնություն ցույց չավեցին և դրանով արգելք հանդիսացան հայկաթոլիկական միասնական ձևադրմանը⁵⁶։ Սակայն այդպիսի ձևադրման գործնականում, այնուամենայնիվ, ստեղծվում էր, շնորհիվ լայն մասսաների կայունության՝ հակառակ անձնական շահերով ղեկավարվող ունեորների դավաճանական գիրքին։ Հայ բնակչության աշխատավոր մասսաները միշտ էլ ընդհանուր լեզու են գտել իրենց իրավունքների համար պայքարող ուկրաինական աշխատավորների հետ։ 1629 թ. Լվով ժամանեցին բարձրաստիճան կաթոլիկ հոգևորականներ, որոնք ցանկանում էին Լվովի ուկրաինական բնակչության վրին փաթաթել ունիան։ Ոչ միայն ուկրաինացիները, այլև հայերը թշնամարար ընդունեցին վատիկանի գործակալներին։ Այդ զեպերի ժամանակակիցը գրում է. «Ներկուշարի, բերդում ունիատները բողոքեցին ուկրաինացի և հայ խոհարարուհիների դեմ, որոնք փողոցներում նրանց անիծում և կոպակալում էին անվանում։ Բերդում խոստացան նրանց խիստ պատժել, իսկ մի քանիսին ձերբակալեցին»⁵⁷։ Նույնով ունիայի կողմնակիցները ստիպված եղան հեռանալ Լվովից, իրենց պարտված ճանաչելով։

Հայ շարքային վաճառականները հաճախ գործնական աջակցություն էին ցույց տալիս միաբանությանը, որը մշտական պայքար էր վարում կաթոլիկ կղերի դեմ։ Միաբանության գեսպանները, հաճախ երկար ժամանակով, լինում

⁵² „Monumenta“, էջ 94—95. „Акты Западной России“, հատ. 3, № 138, էջ 278։

⁵³ Я. Д. Исаевич, Из истории книги во Львове в XVI—XVII вв. (հոգվածը տպագրվում է „Книга. Исследования и материалы“ ժողովածուում)։

⁵⁴ T. Elzanowski, Niewiara schismatyko'w polskich, Լվով, 1631, հեղինակը օգտվել է Կրակովի Բազիլոնյան գրադարանի օրինակից։

⁵⁵ Յ. Գալիկիչ, Նշվ. աշխ., էջ 185։

⁵⁶ АЮЗР, հատ. 12։

⁵⁷ D. Zubrzycki, Նշվ. աշխ., էջ 269։

էին Վարչաժամանակ, ձգտելով օգտագործել օրինական լուրջ հնարավորությունները ուկրաինական բնակչության իրավունքների սահմանափակման դեմ պայքարելու համար: Եվ ահա, շատ անգամ (օրինակ, 1605 և 1615—1616 թթ.) միաբանությունը Վարչաժամանակի իր ղեկավարներին ուղարկում էր նամակներ, իրավաբանական նյութեր և դրամ՝ հայ վաճառականների միջոցով⁵⁸:

Ուկրաինացիները և հայերը հանդես էին գալիս նաև կաթոլիկության դադարաբանական էքսպանսիայի դեմ, և այդ կապակցությամբ նրանց դրականությունն ու գրքերի տպագրությունը ենթարկվում էին կաթոլիկ եկեղեցականների կողմից միատեսակ ուսուցանանքի: 1630 թ. գրավվեց և ոչնչացվեց հայ ե. Գորիշկա-Գոլուբովիչի «Հոռոմեական եկեղեցու նույնպիսի ու վարչահոտ սխալի ձևավորում և համառոտ շարադրություն» հակակաթոլիկական պամֆլետի ողջ տպագրանակը⁵⁹, իսկ 1639 թ. նույն աղբյուրի վկայությամբ (քսյոնձ Յա. Տ. Յուգեֆովիչի ժամանակագրություն) նույնպիսի ուսուցանանք կատարվեցին Լվովի ուղղափառ եպիսկոպոս Երեմիա Տիսարովսկուն նվիրված ներբողի նկատմամբ, որը հրատարակվել էր ուկրաինացի Միխայիլ Սլեպկոյի կողմից⁶⁰: Հավանաբար, երկու դեպքում էլ գործում էր միևնույն մարմինը՝ հոռոմեական-կաթոլիկական թեմական կոնսիստորիան:

Դեռևս XIX դ. լեհ պատմաբան Ա. Յու. Ռոլլեն ուշադրություն է դարձրել վավերագրական մի շարք տվյալների վրա, որոնք վկայում են այն մասին, որ 1648 թ. սկսված ազատագրական պայքարի տարիներին Կամենեցի հայ քաղաքացիների համակրանքը եղել է ուկրաինական ժողովրդի կողմը⁶¹: Միևնույն ժամանակ Կամենեցի նշանավոր տարեգիր Ավկսենտր լեհական խոշոր կալվածատերերի կողմնակիցն էր. նա փաստորեն հանդես եկավ որպես հայ վերնախավի այն մասի ներկայացուցիչներից մեկը, որը XVII դ. երկրորդ կեսին տնտեսական արտոնությունների պահպանման համար համաձայնություն կայացրեց կաթոլիկների հետ ունեւոր բնդունելու հարցում: Այդպիսով, այստեղ ևս մենք նկատում ենք սկզբունքային տարբերություն աշխատավորական լայն շերտերի և իրենց ժողովուրդների շահերը մատնող շահագործող վերնախավի գիրքերի միջև:

Բնորոշ է այն փաստը, որ հայ առանձին նորարաններ ծառայում էին որպես կազակներ Ռմենիցկու զորքում⁶²: Հատկապես մեծ նշանակություն ուներ հայ վաճառականների մասնակցությունը ուկրաինացիների և կազակային զորքի մատակարարման գործում: Վենետիկի նվիրակ Սադրեդոն 1649 թ. նոյեմբերի 29-ին Վիեննայից տեղեկացնում էր Վենետիկի սենատին, որ իտալական և արտասահմանյան այլ վաճառականներ կազակների հետ առևտուր չեն անում, միայն հայերն են, որ չնայած թագավորական արքունիքի թշնամական վերաբերմունքին, հարաբերություններ են պահպանում նրանց հետ⁶³: Այսպիսի փաստերը խոսում են այն մասին, որ հայ բնակչության զգալի

⁵⁸ АЮЗР, հատ. 11, էջ 39, 349:

⁵⁹ Յա. Դ. Դաշկևիչ, նշվ. աշխ., էջ 63—65:

⁶⁰ Չարտորդականների գրադարան Կրակովում, ձեռ. 3064, էջ 174: Յ. Դ. Исаевич, Издательская деятельность Львовского братства в XVI—XVIII вв., сб. «Книга», հատ. 1, Լվ., 1962:

⁶¹ Յա. Դ. Դաշկևիչ, նշվ. աշխ., էջ 148:

⁶² Փ. Մ. Шевченко, Політичні та економічні зв'язки України з Росією в середині XVII ст., Կ., 1939, էջ 291:

⁶³ М. Кордуба, Венецькие посольства до Хмельницького, ЗНТШ, հատ. 78, էջ 67:

մասը, ճիշտ հասկանալով նմենիցիս կողմից թաթարների հետ դաշինք կապելու հարկադրական բնույթը, ոչ միայն համակրանքով էր վերաբերվում ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարին. այլև գործունե մասնակցություն էր ունենում այդ պայքարին:

Առանձին հետազոտության է արժանի թուրք-թաթարական տգրեհայի դեմ ուկրաինական և հայ աշխատավորների համատեղ պայքարի պատմությունը: Հարյուրամյակներ շարունակ սուլթանական թուրքիան և նրա վասալ Ղրիմի խանությունը թալանչիական արշավանքներ էին կազմակերպում Ուկրաինայի վրա: Ուկրաինական կազակության պայքարը թուրքերի ու թաթարների դեմ համակրություն էր վայելում հայերի շրջանում ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Մյուս կողմից, հայերի ակտիվ մասնակցությունը հակաթուրքական բոլոր բռնի միավորման գործում պատշաճ րոլը խաղում էր և աջակցություն էր գտնում Ուկրաինայում: Շատ բան արեցին հայ վաճառականները թուրքական կամ թաթարական գերության մեջ ընկած ուկրաինական կազակներին, գյուղացիներին, բաղարացիներին ազատելու համար փրկագին վճարելու գործում⁶⁴:

Ուկրաինացիներն ու հայերը չափազանց հետաքրքրվում էին միմյանց մշակութային ժառանգությամբ: Այլ աղբյուրների ղեկավարամատչելիության պատճառով ուկրաինացիները, երբեմն, ստիպված էին լինում դիմելու կաթոլիկական գրականությանը: Այսպես, Լվովի միարանության նշանավոր անդամ և մատենասեր Կոնստանտին Մեծապետի (մեռ. 1649 թ.) զրադարանում կար «Confessio brevis Armenorum»⁶⁵ գիրքը, Յուրա վանքի զրադարանում գտնվում էր Բեմբուսի «Ormiańskie nabożeństwo» պարսավագիրը (Կրակով, 1630)⁶⁶: Սակայն չնայած դրան ուկրաինական կուլտուրական-գիտական հասարակայնության ներկայացուցիչները ձգտում էին տիրապետել հայոց լեզվին, որը նրանց հնարավորություն կտար ծանոթանալու հայերի պատմությանն ու մշակույթին վերաբերող առավել անաչառ սկզբնաղբյուրներին: Հայկական կուլտուրայի վերաբերյալ այդպիսի հետաքրքրության արտահայտություններից մեկն էր ուկրաինական կուլտուրական խոշորագույն կենտրոն հանդիսացող Կիև-Մոգիլյովյան ակադեմիայի զրադարանում Շրեդերի հայոց լեզվի բառարանի գոյությունը (Io. Ioach. Schroderi Thesaurus linguae Armenicae, Ամստերդամ, 1640)⁶⁷: Միաժամանակ հայկական արքեպիսկոպոսարանի զրադարանում կային Ուկրաինայի պատմությանը վերաբերող նյութեր: Լվովի հայերի անձնական զրադարաններում կային ուկրաինական ձեռագրեր և ուկրաինական հեղինակների տպագրված գրքեր: Հայերի հետաքրքրությունը ուկրաինական ժողովրդի մշակույթով և պատմությամբ ունեցավ այն հետևանքը, որ Ուկրաինայի և ուկրաինացիների մասին բազմաթիվ տվյալներ կան հայկական աղբյուրներում⁶⁸:

⁶⁴ В. В. Грабовецкий, Армянские поселения на западноукраинских землях. «Исторические связи и дружба украинского и армянского народов» զրքում, Երևան, 1961, էջ 101:

⁶⁵ Я. Писаевич, Из истории книги во Львове в XVI—XVIII вв. (հոգվածն ընդունված է տպագրության):

⁶⁶ ЛБАН, рукопись Оссол., հատ. 2391, թ. 75:

⁶⁷ «Акты и документы, относящиеся к истории Киевской академии», отд. 2, հատ. 5, Կ., 1908, էջ 357:

⁶⁸ В. А. Акопян, Армянские источники об Украине и украинцах «Исторические связи и дружба...» զրքում, էջ 210—228:

Դրանցից մի քանիսը վկայում են, որ հայ տարեգիրներն ու հուշագիրները լավ են իմացել ուկրաինական ժողովրդի կյանքը: Բնորոշ է, որ Լվով ալյեկոյ Արևմտքի բազմաթիվ ճանապարհորդներ ուղադրություն էին դարձնում գլխավորապես բնակչության պատրիկ վերնախավի վրա: Մինչդեռ XVII դ. հայ երևելի ճանապարհորդ Սիմեոն Դսիբր չափստեցին խոսում է նաև «ներքին խավերի» մասին: Նա, ի դեպ, Լվովի բնակչությանը թվին է դասում գերազանցապես աշխատավոր մարդկանցով բնակեցված լայնատարած արվարձանների բնակիչներին: Դա նրան հնարավորություն է տվել ճիշտ որոշելու Լվովի բնակչության ազգային կազմը, այսինքն, որ ուկրաինացիներն այստեղ տասնապատիկ ավելի են, քան լեհերը⁶⁹:

Հայկական իրավունքի հանդեպ խոր հետաքրքրության վկայություն են հանդիսանում Լվովի հայերի դատաստանագրքի և հայ իրավարանական մտքի այլ հուշարձանների մինչև մեր օրերը պահպանված բազմաթիվ պատճենները, որոնցից մի քանիսը հավանորեն պատկանել են ուկրաինական քաղաքացիներին: Մի շարք պատճեններ պահպանվում են ուկրաինական արխիվներում ու գրադարաններում (Լվով, Օդեսա և այլն), մի քանիսը հայտնաբերվեցին Լեհաստանում⁷⁰ և այլ երկրներում:

Ուկրաինական հայերի իրավարանական փաստաթղթերից արևմտաուկրաինական քաղաքների բնակչությունը կարող էր շատ մանրամասնություններ իմանալ հայ զաղութարանների միջավայրի և բուն Հայաստանի սովորույթների մասին: Հիշենք, ի դեպ, որ 1669 թ. Լվով քաղաքի հայազգի ավագները մագիստրատական ակտերում թողել են հայտարարություն այն մասին, որ էջմիածնի կաթողիկոսները փաստաթղթերը չեն ստորագրում, այլ դրոշմում են կնիքով, որը նրանք միշտ իրենց մոտ են պահում, «որովհետև այդ երկրներում կնիքը ավելի կարևոր է քան ստորագրությունը»⁷¹:

Ժամանակակից բուրժուական հեղինակ Զորջիո Պետրովիչը 1950 թ. Հոռմում հրատարակված գրքում գրում է, որ Ռեչ Պոսպոլիտայի հայերի մոտ «ի տարրերություն ուկրաինացիների բացակայում էին դպրոցները ոչ միայն աշխարհիկների, այլև հոգևորականների համար»⁷²: Սա չի համապատասխանում իրականությանը: Ուկրաինական հայերն ունեին իրենց դպրոցները. հայերի մեջ քիչ չէր ժամանակի բարձր ուսում առած մարդկանց թիվը: Հիմք կա ենթադրելու, որ XVI—XVII դդ. Ուկրաինայում ազգային կուլտուրայի պաշտպանության համար ծավալված շարժումը պետք է արձագանք գտներ նաև հայ բնակչության շրջանում: 1574 թ. Խվան Ֆյոդորովը հիմնադրեց առաջին տպարանը, իսկ դրանից քիչ անց այստեղ ստեղծվում են մի շարք (մշտական կամ կարճատև գործող) տպարաններ՝ Օստրոգում, Լվովում, Ստրյատինում, Կիևում և ուրիշ քաղաքներում: 1591 թ. մշտապես գործում էր Լվովի միաբանության

⁶⁹ «Սիմեոն դսիբի Լեհացոյ ուղեգրութիւն», Վիեննա, 1936, էջ 338:

⁷⁰ ГЛАВНЫЙ архив древних актов в Варшаве, ф. Браницких из Сухой, л. 15/22 («Статуты армянского права» в латинском переводе 1694 г.) Զարտորիժսկիների դրադարան կրակովում, ձև. IV 2030 (Права, артикулы и декреты львовских армян за 1510—1604 гг.). Վրոցլավում Օստոյինսկիների անվան Ազգային ինստիտուտ, ձև. 12339 II (Кодекс армянского права за 1601—1604 гг.) և այլն:

⁷¹ ЦГИА во Львове, ф. 52, оп. 3, т. 77, էջ 1109—1110

⁷² G. Petrowicz, L'unione degli Armeni di Polonia con la santa sede (1626—1686), Roma, 1950, էջ 3:

տպարանը⁷³։ Հավանորեն այդ օրինակին հետևելով 1616 թ. Լվովում ստեղծվեց Տեր-Հովհաննես Քարմատենենցի հայկական տպարանը⁷⁴։ Ուկրաինական գործիչների համագործակցությունը այս տպարանին, նրա կազմակերպման ժամանակ, ավելի հավանական է, քան կաթոլիկ հրատարակիչների համագործակցությունը, որոնք միատեսակ թշնամաձրով էին վերաբերվում և՛ հայերին, և՛ ուկրաինացիներին։ Պետք է ենթադրել, որ Լվովի միաբանության հասարակական-քաղաքական և կուլտուրական հաջող գործունեությունը 1586—1786 թթ. նպաստել է, որ Լվովի հայերի մոտ համանման կազմակերպություն չունենալու անհրաժեշտության միտք ծագի⁷⁵։ 1640 թ. Լվովում ստեղծվում է ստաջին հայկական միաբանությունը, իսկ 1654 թ. ևս մեկը։ Շուտով միաբանություններ ստաջացան մյուս քաղաքներում⁷⁶։ 1710 թ. Լվովում հիմնադրված «Յավլովցյան» հայկական միաբանության կանոնադրությամբ սահմանված կազմակերպական կառուցվածքը շատ ընդհանուր բան ունեն ուկրաինական միաբանությունների հետ⁷⁷։

1665 թ. Լվովում գոյություն ունեւ այսպես կոչված տեսադիմացիների հայկական կոլեգիան, որը Ուկրաինայում այն ժամանակ գոյություն ունեցող բարձրագույն տիպի սակավաթիվ դպրոցներից մեկն էր։ 1711 թ. սկսած մինչև 1779 թ., երբ դպրոցը փակվեց, այնտեղ սովորել են նաև ուկրաինացիներ և դրա համար էլ տեսադիմացի կոլեգիան կոչվեց հայ-ուկրաինական։ Կոլեգիայի ավելի քան հարյուրամյա գործունեության ընթացքում այնտեղ կրթություն են ստացել 200-ից ավելի ուկրաինացիներ և մոտ 140 հայեր⁷⁸։ Չնայած այն բանին, որ Վատիկանը տեսադիմացիների միաբանությունն օգտագործում էր ժողովրդին ատելի ունիան ամրապնդելու նպատակով, կոլեգիան ունեցավ նաև որոշակի դրական դեր։ Այնտեղ ուկրաինացիները ծանոթանում էին հայկական պատմությանն ու մշակույթին։ Ծանոթությունը հայ ժողովրդի հնադարյան և ինքնատիպ կուլտուրայի հետ օժանդակում էր ուկրաինական կուլտուրայի հարստացմանը, նրա գործիչների մտահորիզոնի լայնացմանը։

Մեզ հետաքրքրող ողջ ժամանակաշրջանում ֆեոդալների, եկեղեցականների և ունևոր այլ խավերի ներկայացուցիչները շատ բան արեցին, որպեսզի երկպառակություն և անվստահություն սերմանեն ազգությունների միջև։ Սակայն միաժամանակ գործում էին նաև այլ կարևոր ուժեր, որոնք աջակցում էին ուկրաինական ու հայ աշխատավորների միջև փոխադարձ համերաշխության և բարեկամության հաստատմանը։ Ի միջի այլոց, որոշակի դրական դեր է խաղացել Իշույանդիոնից երբևի՜ն ստացված կուլտուրական ժառանգության ընդհանրությունը։ Ի՛նչպե՛ս այս հանգամանքը չպետք է գերազնահատել։ Մեծա-

⁷³ Я. Д. Исаевич, Издательская деятельность Львовского братства в XVI—XVIII вв.; «Книга, Материалы и исследования», Сб. 7, У., 1963։

⁷⁴ Յ. ա. Ի. Գալեիչ, նշվ. աշխ., էջ 50—51։ Մեզ հասել են այդ տպարանի երկու հրատարակությունները՝ «Սաղմոսը» (պահպանվում է Վենետիկում) և «Աղբյուր Պրիգիթի» (պահպանվում է Լեյդենում)։

⁷⁵ Я. Д. Исаевич, Львівське братство і його роль в міжсов'янських культурних зв'язках в XVI—XVIII ст. В кн.։ Тези доповідей V міжвузівської республіканської славістичної конференції, Ужгород, 1962։

⁷⁶ В. Јапуз, „Mons plus“ Ormian lwowskich, *Լվով*, 1918, էջ 33—34։

⁷⁷ ЛБАН, отдел рукописей, №№ Оссол. 1651, Оссол. 3731, Оссол. 1704։

⁷⁸ Я. Д[ашкевич], Публикація джерел до історії української школи у XVIII ст., «Науково-інформаційний бюлетень Архівного управління УРСР», 1962, № 1, էջ 74։

գույն նշանակություն է ունեցել ուկրաինական և հայ աշխատավորների արմատական շահերի ընդհանրությունը, աշխատավորներ, որոնք հավասարապես շահագրգռված էին պայքար մղել ինչպես Ռեչ Պոսպոլիտայի ու կաթոլիկության սոցիալական և ազգային ճնշման քաղաքականության, այնպես էլ թուրք-թաթարական ագրեսիայի դեմ:

К ХАРАКТЕРИСТИКЕ АРМЯНО-УКРАИНСКИХ СВЯЗЕЙ ВО ЛЬВОВЕ В XV—XVIII ВЕКАХ

Я. Д. ИСАЕВИЧ (Львов)

(Р е з ю м е)

В XV — первой половине XVII вв., а частично и позже на западно-украинских землях (включая юго-западную часть Правобережья) развивались старые и возникали новые армянские колонии. Засвидетельствованные многочисленными источниками дружественные отношения между армянскими поселенцами и окружающим украинским населением были важным фактором, содействовавшим росту колоний.

В указанный период большинство армян, проживавших во Львове, имело украинские имена и фамилии, причем употреблением армянами украинских фамилий отнюдь не было вызвано каким-либо нажимом со стороны государственных властей. Имена украинского образца свидетельствуют о наличии тесных культурных связей армянских поселенцев с украинским населением еще со времен Киевской Руси.

Установив прочные торговые связи с Ближним Востоком, Балканским полуостровом и другими странами, армяне содействовали вовлечению украинских земель в мировую торговлю. В украинских городах бывали армянские купцы из Кафы, Константинополя, Токата, городов Балканских стран и самой Армении. В XVI—XVIII вв. крепили и другие формы экономических связей между украинским и армянским населением. В частности, армяне выступали как кредиторы украинских «предмешан».

Католические феодалы и патрициат вели наступление на права армянских поселенцев под флагом католической религии, стремясь лишить их своей национальной самобытности. Таким образом, армянские колонисты ощущали на себе такой же национально-религиозный гнет со стороны господствующих классов Речи Посполитой, как и коренное украинское население. Украинцы и армяне Львова выступали и против идеологической экспансии католицизма, и в связи с этим их литература и книгопечатание подвергались одинаковым репрессиям со стороны католических церковников.

Отдельного исследования заслуживает история совместной борьбы украинских и армянских трудящихся против турецко-татарской агрессии.